

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի
Հրազդան քաղաքում
Իրականացված բնապահպանական ծրագրի մասին

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով սահմանված ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) անվանումը՝

ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի Փոքր բուլվարային փողոցին հարակից հատվածների բարեկարգում

Ա) ԾՐԱԳՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրի իրավական հիմքերը (նշել համայնքի ավագանու որոշման և ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի ամսաթիվը և համարը)՝ **Հրազդան համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 21-ի թիվ 104 որոշում:**

1. Ծրագրի սկիզբը և ավարտը՝ _____:

2. Ծրագրի նախագծային արժեքը՝ 7 132,656 հազ. դրամ, որից 5 107,800 հազ. դրամ ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին և առկայության դեպքում՝ 2 024,856 հազ. դրամ համայնքային բյուջեի միջոցների հաշվին և ___ ___ հազ. դրամ այլ միջոցների հաշվին:

3. Համայնքի առկա խնդիրները և նախնական վիճակի նկարագրությունը՝ (Ծրագրով անդրադարձ կատարված բնապահպանության և առողջապահության ոլորտներում)

Վնասակար արտանետումների ազդեցությունը նվազեցնելու համար նպատակահարմար է կատարել Հրազդան համայնքի Սահմանադրության հրապարակին կից՝ Բուլվարային փողոցի կանաչապատ տարածքների սիզախոտի ցանքի, մշակման, ծաղկանոցների կառուցման և տարածքների բարեկարգման աշխատանքներ, որոնց շնորհիվ կընդլայնվեն ու կբարեկարգվեն համայնքի կենտրոնական հրապարակին կից հատվածների կանաչապատ տարածքները:

4. Ծրագրի նպատակը և Ծրագրով հաստատված ուղղակի և վերջնական ակնկալվող արդյունքները՝ Ծրագրի իրականացումը կնպաստի համայնքի բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը՝ ավելացնելով կանաչապատ տարածքների ու պուրակների թվի ավելացում

5. Ծրագրի շահառուները՝ (նկարագրել շահառուների խումբը՝ ըստ տարիքային, մասնագիտական, կարիքավորության կամ այլ գործոնների և նախատեսվող թիվը) Ծրագրի շահառուները համայնքի բնակչությունն է՝ անկախ տարիքից ու սեռից:

6. Ծրագրի շրջանակում նախատեսված միջոցառումները և դրանց ընտրության հիմնավորումները՝ (նշել Ծրագրի, ինչպես նաև ծրագրում ընդգրկված միջոցառումների ընտրման հիմնական պատճառները)՝

Ծրագիրը մշակելիս հաշվի է առնվել նախորդ տարիներին բնապահպանական վճարներից կատարված մասհանումների հաշվին քաղաքում իրականացված ծրագրերը, ինչպես նաև ներկա պայմաններում առավել հրատապ լուծում պահանջող խիստ մտահոգող հարցերը:

